

## Հաշվետվություն

Արարատի մարզի Մրգավետ համայնքի ղեկավարի 2017թ-ի

երկրորդ կիսամյակում կատարած աշխատանքների

25.12.2017թ. Մրգավետ գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում, որը վարում էր համայնքի ղեկավար Լ. Աբրահամյանը, քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար՝

Ն. Կարապետյանը: Հանրային լսմանը ներկա էին գյուղապետարանի աշխատակազմը, դպրոցի տնօրեն՝ Վ. Զոհրաբյանը, մանկապարտեզի վարիչ՝ Ն. Գևորգյանը, հայփոստի և բուժ. ամբուլատորիայի աշխատակցուհիները:

Լսեցին- Մրգավետ համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2017թ. դեկտեմբերի 25-ի դրությամբ կատարած աշխատանքների վերաբերյալ:

Արձանագրվեց, որ երկրորդ կիսամյակում կատարվել են հետևյալ աշխատանքները:

Գյուղապետարանում բնակչությունից ստացվել է 135 դիմումներ, ինչպես նաև բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նիստի ժամանակ, և տրվել են համապատասխան լուծումներ:

2017թ. դեկտեմբերի 25-ի դրությամբ գյուղապետարանը բնակիչներին տվել է 433 տեղեկանք, ստացել 120 պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, որոնք քննարկվել են և սահմանված ժամկետներում տրվել պատասխաններ:

2017թ. երկրորդ կիսամյակի ընթացքում կազմակերպվել է համայնքի վարչական տարածքում սանմաքրման աշխատանքներ, որոնք կրել են պարբերական բնույթ՝ մաքրվել են ոռոգման առուները և փողոցները: Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել են հողամասի չափագրման, սահմանների ճշգրտման, հողամասերի փոփոխման և ձևակերպման աշխատանքները:

Նշվեց անապահով ընտանիքներին, հարազատին կորցրած անձանց անհատույց հատկացումներ կատարելու մասին: Համայնքի սոց. անապահով ընտանիքներին տրվել է 2.715.000 (երկու միլիոն յոթ հարյուր տասնհինգ հազար) դրամ, հարազատին կորցրած անձանց տրվել է 300.000 (երեք հարյուր հազար) դրամ ֆինանսական աջակցում, աղբահանության աշխատանքների կազմակերպման հարցում հատկացվել է 990.000 (ինը հարյուր իննսուն հազար) դրամ:

Դեկտեմբերի 25-ի դրությամբ եկամտային մասով կազմում է 51.222.000 (հիսուսմեկ միլիոն երկու հարյուր քսաներկու հազար) դրամ, տարեկանի կտրվածքով կատարվել է 100%:

2017թ երկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ  
հարկատեսակների

1.Հողի հարկ – 4.808.000

2.Գույքահարկ –5.642.000

3.Տեղական տուրքեր –305.000

Համայնքի ղեկավար



Լ. Աբրահամյան